ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(2013 - 2018)

Խմբագրական խորհուրդ՝ **Ա.Վ.Յուզբաշյան** (նախագահ), **Ա. Հ. Մակարյան, Մ. Ա. Ճաղարյան, Ա.Մ.Հովսեփյան**

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշներ.

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տպարան, Իջևան, 2018, 79 էջ:

Սույն վերլուծական ուսումնասիրության նպատակը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության արդյունքային ցուցանիշների /ԳԱՑ/ սահմանված լրակազմի օգնությամբ: Ներկայացված են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների առանցքային ցուցանիշները վերջին հինգ տարիների համար: Այն վեր է հանում ԵՊՀ ԻՄ-ի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար: Սույն վերլուծությունը նաև կնպաստի ԵՊՀ ԻՄ-ի որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը:

Հասցեագրվում է բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

Բնագավառ 1. Ընդունելություն և համակազմ 6

Բնագավառ 2. Ուսումնական գործընթաց 22

Բնագավառ 3. Ռեսուրսներ և կառավարում 40

Բնագավառ 4. Ենթակառուցվածքներ 56

Բնագավառ 5. Գիտություն և նորարարություն 67

Բնագավառ 6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն 75

Նախաբան

Սույն վերլուծությունը կատարվել է 2017-18 ուստարում ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրների իրականացման արդյունքների վերլուծության շրջանակներում՝ Մասնաճյուղի համապատասխան կառույցների մասնակցությամբ:

Ուսումնասիրության՝ ստորև ներկայացվող արդյունքներն ունեն երկակի նշանակություն: Առաջին հերթին այս ցուցանիշները կարող են հիմք ծառայել բուհի ինքնավերլուծության ու գործունեության արդյունավետության գնահատման, ինչպես նաև տարեկան և եռամյա հաշվետվությունների ստեղծման համար, մյուս կողմից դրանք կարող են օգտագործվել Համալսարանի ռազմավարական պլանավորման գործընթացում՝ ներքին միջավայրի և հաջորդ SWOT /ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների/ վերլուծությունների համար:

ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային ցուցանիշների /ԳԱՑ/ առաջարկվող լրակազմն անհրաժեշտ է ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար: Որպես չափիչ գործիք՝ ԳԱՑ-երը կոնկրետ են, պարզ և հաշվարկելի: Դրանց առկայությունը պլանավորման գործընթացում ապահովում է վերջինիս նպատակների, խնդիրների և ռազմավարության գործնականությունը:

Միջավայրով ուղղորդվող ռազմավարական պլանավորումը ենթադրում է բուհի գործունեության (կամ կատարողականի) գնահատում և համեմատում՝ բուհի կամ նրա շահակիցների կողմից սահմանված «ցանկալի» ցուցանիշների հետ՝ ապահովելով կապը բուհի և միջավայրի կարևորագույն տարրերի միջև: ԳԱՑ-երն այն անհրաժեշտ հենքն են, որոնք կապակցում են բուհի կարևորագույն գործառույթները պլանավորման գործընթացի հետ: Այս ցուցանիշների օգտագործումը ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական պլանավորման գործընթացում մեզ հնարավորություն է տվել հիմնական ռազմավարական ոլորտներում համեմատել ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքները կամ կատարողականը այլ բուհերի, ԵՊՀ ԻՄ-ի նախորդ տարիների և պլանավորված ցուցանիշների հետ:

Առաջարկվող ցանկում կա ցուցանիշների երկու տեսակ, որոնք ձևավորում են ԳԱՑ-երի լրակազմը: Առաջինը գործ ունի մասնաճյուղի հիմնական գործունեության որոշակի արդյունքի չափման հետ, արդյունք, որի նկատմամբ ԵՊՀ ԻՄ-ն ունի վերահսկողության հնարավորություն: Ցուցանիշների այս խումբը կոչվում է գործունեության արդյունքի գնահատման առանցքային ցուցանիշներ: ԳԱՑ–երի երկրորդ խումբը կապված է այն պայմանների չափման հետ, որոնք անմիջականորեն ազդում են բուհի «առողջական» վիճակի և բարեկեցության վրա, պայմաններ, որոնց նկատմամբ բուհը կարող է ունենալ փոքր վերահսկողություն կամ ընդհանրապես չունենալ:

Համաձայն ընդունված մեթոդաբանության՝ ուսումնասիրությունը կատարելիս իրականացվել են հետևյալ հաջորդական քայլերը:

Առաջին քայլը, որ կատարվել է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկի կազմման ուղղությամբ, Համալսարանի գործունեության հիմնական ոլորտների պարզումն է, որտեղից էլ ընտրվել են ամենակարևոր ԳԱՑ-երը: Առանձնացվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության 6 հիմնական ոլորտներ.

1. Ընդունելություն և համակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում
4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորարարություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

Այնուհետև սահմանվել են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունքային և «առողջական» վիճակի ցուցանիշները: Կատարվել է

ԳԱՑ-երի ուսումնասիրություն և վերլուծություն ըստ տարիների՝ 2013-2018 թթ. ժամանակահատվածի համար: Ստորև բերված է ԵՊՀ ԻՄ-ի ԳԱՑ-երի համապարփակ ցանկը՝ բաղկացած 68 ցուցանիշներից և դասակարգված ըստ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների:

Առաջարկվող վերլուծական ուսումնասիրությունը հասցեագրվում է ԵՊՀ ԻՄ-ի և նրա ստորաբաժանումների վարչակազմերին, բոլոր այն կառույցներին, որոնց գործունեությունն առնչվում է ԵՊՀ ԻՄ-ի կառավարման և պլանավորման գործընթացներին:

ԲՆԱԳԱՎԱՌ 1.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱԶՄ

Յուցանիշ 1.1.	Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)
Յուցանիշ 1.2.	Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.3.	Դիմորդների բաշխումն ըստ մարզերի
Յուցանիշ 1.4.	Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)
Յուցանիշ 1.5.	ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 1.6.	Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)
Յուցանիշ 1.7.	Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում
Յուցանիշ 1.8.	Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին
Յուցանիշ 1.9.	Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունն ընդունվածների թվին
Յուցանիշ 1.10.	Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)
Յուցանիշ 1.11.	Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.12.	Հեռակա ուսուցման համակազմը (բակալավրիատ) և հաշվեկշիռը հիմնական համակազմում
Յուցանիշ 1.13.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.14.	Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)
Յուցանիշ 1.15.	Ուսանողների շարժը (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.1. Դիմորդների թիվը (ըստ կրթական աստիճանների, ուսուցման ձևերի և ուղղությունների)

Ցուցանիշ 1.1	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Դիմորդների թիվն ըստ կրթական աստիճանների և ուղղությունների	**499**	**439**	**405**	**434**	**370**
Բակալավրիատ (առկա)	**288**	**222**	**208**	**228**	**195**
Հումանիտար գիտություններ	144	109	93	112	103
Բնական գիտություններ	43	31	49	60	45
Տնտեսագիտական	81	60	45	41	24
Կիրառական արվեստ	20	22	21	15	23
Բակալավրիատ (հեռակա)	**202**	**217**	**197**	**206**	**175**
Մագիստրատուրա	9	0	0	0	0
Կիրառական արվեստ	9	0	0	0	0

2017թ. ընդունելության գործընթացում գրանցվել է վերջին հինգ տարիների ընդունելության արդյունքներով դիմորդների ամենացածր ցուցանիշը: Առկա ուսուցմամբ դիմորդների թիվը նվազել է բոլոր կրթական ծրագրերով (բացառություն է կազմել Կիրառական արվեստ կրթական ծրագիրը, որտեղ գրանցվել է նախորդ հինգ տարիների ամենաբարձր ցուցանիշը): Ամենաշատ հոսքը կատարվել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետում (կազմել է դիմորդների ընդհանուր հոսքի 53%-ը, հեռակա ուսուցմամբ՝ 41% -ը) և Բնական գիտությունների ֆակուլտետում (առկա ուսուցմամբ կազմել է դիմորդների ընդհանուր հոսքի 23%-ը, հեռակա ուսուցմամբ՝ 35% -ը): Առկա ուսուցմամբ նախընտրելի են համարվել հիմնականում «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերը, իսկ հեռակա ուսուցմամբ նախընտրելի կրթական ծրագրերն են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն» և «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրերը:

2012թ.-ից հաշվառված են նաև մագիստրատուրայի դիմորդները: *2014թ.-ից ժամանակավորապես դադարեցվել է մագիստրատուրայի ընդունելությունը:*





Յուցանիշ 1.2. Դիմորդների բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում

Յուցանիշ 1.2	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ընդհանուր դիմորդների թիվը	13439	12300	11803	11324	9710
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը(առկա)	288	222	208	228	195
ԵՊՀ ԻՄ դիմորդների բաժնեմասը	2,14%	1,80%	1,76%	2.01%	2,01%

ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների բաժնեմասն ընդհանուր դիմորդների համակազմում համեմատաբար կայուն է և կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր թվում կազմում է մոտ 2%: Ընդհանուր դիմորդների համակազմում ԵՊՀ ԻՄ-ի դիմորդների նվազումը պայմանավորված է ինչպես կրթօջախում հեռակա ուսուցման առկայությամբ, այնպես էլ մարզում շրջանավարտների թվի նվազմամբ:





Յուցանիշ 1.3. Դիմորդների բաշխումն ըստ մարզերի

Յուցանիշ 1.3	2013/14		2014/15		2015/16		2016/17		2017/18	
Երևան	4	0,82%	11	2,51%	5	1,23%	6	1.38%	5	**1.35%**
Կոտայք	8	1,63%	4	0,91%	3	0,74%	2	0.46%	2	**0.54%**
Արմավիր	0	0,00%	1	0,23%	0	0,00%	0	0.00%	1	**0.27%**
Գեղարքունիք	2	0,41%	5	1,14%	5	1,23%	11	2.53%	5	**1.35%**
Շիրակ	1	0,20%	2	0,46%	0	0,00%	0	0.00%	0	**0.00%**
Արարատ	1	0,20%	3	0,68%	2	0,49%	1	0.23%	1	**0.27%**
Լոռի	8	1,63%	5	1,14%	4	0,99%	1	0.23%	5	**1.35%**
Արագածոտն	0	0,00%	0	0,00%	0	0,00%	1	0.23%	1	**0.27%**
Սյունիք	0	0,00%	0	0,00%	1	0,25%	0	0.00%	0	**0.00%**
Տավուշ	**464**	**94,69%**	**405**	**92,26%**	**375**	**92,59%**	**411**	**94.70%**	**346**	**93.51%**
Վայոց ձոր	0	0,00%	1	0,23%	0	0,00%	0	0.00%	1	**0.27%**
Այլ երկրներից	2	0,41%	2	0,46%	10	**2,47%**	**1**	0.23%	**3**	**0.81%**
Ընդամենը	**490**	100,00%	**439**	100,00%	**405**	100,00%	**434**	100.00%	**370**	**100.00%**

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2017թ. դիմորդների ընդհանուր թվի 93,51%-ը Տավուշի մարզից են: Այս իրողությունը պայմանավորված է մարզում Երևանի պետական համալսարանի մասնաճյուղն ունենալու և որակյալ կրթություն ապահովելու հանգամանքով, ինչպես նաև տարածաշրջանում միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունը լինելու և բարձր հեղինակություն ունենալու փաստերով /հիմք՝ *Արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները*/: Դիմորդների ընդհանուր թվի 5,67% Երևան քաղաքից և ՀՀ այլ մարզերից են (դիմորդներ չեն արձանագրվել միայն Շիրակի և Սյունիքի մարզերից): Դիմորդների փոքր տոկոսը պայմանավորված է Երևանում և ՀՀ այլ մարզերում գործող բուհերի առկայությամբ:





Յուցանիշ 1.4. Ընդունելությունն ըստ կրթական աստիճանների (անվճար, վճարովի)

Յուցանիշ 1.4	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Բակալավրիատ	209	172	161	196	168
Անվճար	41	39	38	40	39
Վճարովի	168	133	123	156	129
Մագիստրատուրա	4	0	0	0	0
Անվճար	2	0	0	0	0
Վճարովի	2	0	0	0	0

2017թ. ընդունելությամբ, ինչպես նախորդ տարիներին, մասնաճյուղն ունեցել է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումամբ (անվճար) 41 տեղ: Ընդունելության արդյունքներով միասնական քննությունները չհաղթահարելու պատճառով թափուր է մնացել երկու տեղ (1 տեղ՝ Քարտեզագրություն և կադաստրային գործ կրթական ծրագրով, 1 տեղ՝ Սոցիալական աշխատանք կրթական ծրագրով): 2017-18 ուստարվա ընդունելության արդյունքներով պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցումամբ ընդունվածների ցուցանիշը հավասար է 2014-2015թթ. ընդունվածների ցուցանիշին:

Վճարովի հիմունքներով մասնաճյուղն ունեցել է 344 տեղ, դրանց մի մասը մնացել է թափուր՝ պայմանավորված նախ դիմորդների թվաքանակով, ապա նաև ընդունելության քննությունները չհաղթահարելու հանգամանքով: 2017-18 ուստարվա ընդունելության արդյունքներով վճարովի հիմունքներով մասնաճյուղ ընդունվածների թվաքանակը գերազանցել է միայն 2015-16 ուստարվա ընդունելության արդյունքներին:



Յուցանիշ 1.5. ԵՊՀ ԻՄ-ի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում

Յուցանիշ 1.5	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Կենտրոնացված ընդունելության ծավալը	13846	12346	11775	9635	**8495**
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	209	172	161	196	**168**
ԵՊՀ ԻՄ բաժնեմասը ընդունելության ընդհանուր ծավալում (%)	**1,51**	**1,39**	**1,37**	**2.03**	**1.98**

Չնայած 2017-2018 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների մասնաբաժինը կենտրոնացված ընդունելության համակարգում (1.98%) շատ չի նվազել (նախորդ ուստարում մասնաբաժինը եղել՝ 2.03%), այնուամենայնիվ գրանցվել է ընդունվածների թվի նվազում, որը մասնաճյուղի համար էական է և այն պայմանավորված է դիմորդների ընդհանուր ծավալի նվազմամբ՝ նախորդ ուստարվա համեմատությամբ: Այն պայմանավորված է նաև Տավուշի մարզի ավագ և միջնակարգ դպրոցների 2017թ. շրջանավարտների ընդհանուր թվի նվազմամբ:





Յուցանիշ 1.6. Մրցութային ցուցանիշն ըստ կրթական աստիճանների (առկա դիմորդների և ընդունվածների հարաբերությունը)

Յուցանիշ 1.6	2013	2014	2015	2016	2017
Բակալավրիատի (առկա) դիմորդների թիվը	288	222	208	228	195
Ընդունվածների թիվը	209	172	161	196	168
Մրցութային ցուցանիշը (բակ.)	**1.38**	**1.29**	**1.29**	**1.16**	**1.16**
Մագիստրատուրայի դիմորդների թիվը	9	0	0	0	0
Ընդունվածների թիվը	4	0	0	0	0
Մրցութային ցուցանիշը (բակ.)	2.25	0	0	0	0

2017-2018 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների մրցութային ցուցանիշը նախոր ուստարվա համեմատ պահպանվել է, ինչը պայմանավորված է դիմորդների թվի և ընդունվածների թվի նվազմամբ: Պետքէ նշել, որ մրցութային ցուցանիշը մասնաճյուղի համար վերջին տարիներին նվազում է և մոտենում է 1-ին, ինչը նշանակում է, որ ընդունելության քննություններում մրցակցությունը գրեթե բացակայում է և արդյունքում իջնում է դիմորդների հավաքած միավորների շեմը:







Յուցանիշ 1.7. Իգական սեռի հաշվեկշիռը դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքում

Յուցանիշ 1.7	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
ԵՊՀ ԻՄ դիմորդների թիվը	499	439	405	434	370
ԵՊՀ ԻՄ իգական սեռի դիմորդների թիվը	255	235	213	241	210
Հարաբերությունը (դիմորդներ)	**51,1%**	**53,5%**	**52,6%**	**55.5%**	**56.8%**
ԵՊՀ ԻՄ ընդունվածների թիվը	408	388	353	397	338
ԵՊՀ ԻՄ իգական սեռի ընդունվածների թիվը	226	193	188	219	195
Հարաբերությունը (ընդունվածներ)	**55,4%**	**49,7%**	**53,3%**	**55.1%**	**57.7%**

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերջին հինգ տարիների ընդունելության արդյունքներով դիմորդների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը տատանվում է 51-60% միջակայքում: Իրողությունը պայմանավորված է ինչպես իգական սեռի շրջանավարտների՝ բարձրագույն կրթություն ստանալու ցանկությամբ, այնպես էլ մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցման համակարգերում իրականացվող կրթական ծրագրերի նախընտրությամբ: «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերը 2017-2018 ուստարում նախընտրել են բացառապես իգական սեռի դիմորդները (119 աղջիկ, 0 տղա):

Ընդունվածների ընդհանուր թվաքանակում իգական սեռի բաժնեմասը վերջին 5 տարիների համար կազմում է 50-58%, որը պայմանավորված է նաև միասնական քննություններին իգական սեռի դիմորդների լավ պատրաստվածությամբ: Իգական սեռի ընդունվածների մասնաբաժինը նույն սեռի դիմորդների թվում վերջին 4 տարիներին բավականին կայուն է՝ 82-91%. դա նույնպես վկայում է աղջիկների ավելի լավ պատրաստվածության մասին:

Հարկ է նշել, որ 2017-2018 ուստարում առկա և հեռակա ուսուցմամբ արական և իգական սեռերի ընդունվածների թվական հարաբերակցությունը տարբեր է (առկա ուսուցմամբ ընդունվել է 138 աղջիկ, 30 տղա, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 57 աղջիկ, 113 տղա): Աղջիկների գերակշիռ մասը նախընտրում է բարձրագույն կրթությունն իրականացնել առկա ուսուցմամբ, իսկ տղաների գերակշիռ մասը ուսումը աշխատանքի հետ համատեղելու համար նախընտրում է հեռակա ուսուցումը:





Յուցանիշ 1.8. Օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Յուցանիշ 1.8	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Դիմորդների թիվը (բակալավրիատ,առկա)	**1**	**2**	**1**	**0**	**0**
Ընդունվածների թիվը	**1**	**2**	**1**	**0**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	1	1	1	0	0
Դիմորդների թիվը (մագիստրատուրա)	0	0	0	0	0
Ընդունվածների թիվը	0	0	0	0	0
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	0	0	0	0
Դիմորդների թիվը (բակալավրիատ,հեռակա)	**0**	**3**	**9**	**1**	**0**
Ընդունվածների թիվը	**0**	**3**	**9**	**1**	**0**
Օտարերկրյա դիմորդների հարաբերությունը ընդունվածների թվին	0	1	1	1	0

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերջին հինգ տարիների ընդունելության արդյունքներով օտարերկրյա դիմորդների թիվը բավականին ցածր է: Օտարերկրյա ուսանողների համակազմը մեծացնելու համար հարկավոր է ակտիվացնել աշխատանքները այլ երկրներից /հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից/ դիմորդներ ներգրավելու ուղղությամբ, իրականացնել հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Միջազգային կապերի բաժինը (*Հիմք՝10.09.2015թ. գիտխորհրդի թիվ 11 նիստ*):



Ցուցանիշ 1.9. Հեռակա ուսուցման դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին

Ցուցանիշ 1.9	2013	2014	2015	2016	2017
Դիմորդների թիվը	202	217	197	206	175
Ընդունվածների թիվը	195	216	192	201	170
Մրցութային ցուցանիշ (Հարաբերությունը)	**1,04**	**1,00**	**1,03**	**1,02**	**1.03**

Հեռակա ուսուցման համակարգում մրցութային ցուցանիշը վերջին հինգ տարիների արդյունքներով տատանվում է 1,0-ից 1,3-ի սահմաններում: Այն պայմանավորված է հեռակա ուսուցման ընդունելության քննություններին դիմորդների բավարար պատրաստվածությամբ, նաև տեղերի բավարար քանակով, որը հնարավորություն է տալիս քննությունների մինիմալ շեմը հաղթահարած դիմորդներին ընդունվել:





Յուցանիշ 1.10. Հիմնական ուսանողական համակազմը (ըստ կրթական աստիճանների)

Յուցանիշ 1.10	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական ուսանողական համակազմը	1548	1531	1693	1685	1580
Բակալավրիատ	**611**	**523**	**666**	**646**	**630**
Հումանիտար գիտ. ֆակուլտետ	313	259	333	325	**313**
Բնական գիտ. ֆակուլտետ	65	64	88	117	**117**
Տնտեսագիտ. ֆակուլտետ	156	132	161	144	**129**
Կիրառական արվեստի ֆակուլտետ	77	68	84	60	**71**
Օտարերկրյա ուս. համակազմը	5	4	7	0	**0**
Հեռակա ուսուցում	**924**	**1004**	**1027**	**1039**	**950**
Մագիստրատուրա	13	4	0	0	0

2017/18 ուստարում առկա և հեռակա ուսուցման ուսանողական համակազմը նվազել է 2015/2016 և 2016/17 ուստարիների համեմատությամբ: Իրողությունը պայմանավորված է ՀՀ հանրակրթական համակարգում ներդրված 12-ամյա կրթության իրականացմամբ, որի հետևանքով նվազել է մարզի շրջանավարտների, ինչպես նաև ընդունելության միասնական քննությունների շեմը հաղթահարած դիմորդների և առաջին կուրսի ուսանողների ցուցանիշը: Նախորդ տարիների համեմատությամբ ուսանողական համակազմի ցուցանիշը պահպանվել է Բնական գիտությունների ֆակուլտետում: Այն պայմանավորված է իրականացվող կրթական ծրագրերի նկատմամբ դիմորդների ցուցաբերած հետաքրքրությամբ, ինչպես նաև արագ զարգացող տեխնոլոգիաների դարաշրջանում աշխատաշուկայում իրենց կայուն տեղը գտնելու ձգտումով:





Յուցանիշ 1.11. Օտարերկրյա ուսանողների համակազմը և հաշվեկշիռը հիմնական համակազմում

Յուցանիշ 1.11	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
ԵՊՀ ԻՄ ուսանողների համակազմը	1548	1531	1693	1685	1580
Օտարերկրյա ուսանողների համակազմը, այդ թվում՝	**5**	**4**	**7**	**0**	0
Բակալավրիատ	5	4	7	0	0
Մագիստրատուրա	0	0	0	0	0
Օտարերկյա ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**0,32**	**0,26**	**0,41**	**0**	**0**

Մասնաճյուղը վերջին 2 ուստարում օտարերկրյա ուսանողների չունի, իսկ ընդհանրապես նրանց թիվը միշտ փոքր է եղել: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է մշակել աշխատանքների համալիր ծրագիր, որը կնպաստի բուհի միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանը: Հարկավոր է ակտիվացնել աշխատանքները օտարերկրյա (հիմնականում Վրաստանից, Ռուսաստանից) դիմորդներ ներգրավելու ուղղությամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ մասնաճյուղում ձևավորվել է Միջազգային կապերի բաժին (10.09.2015թ գիտխորհրդի թիվ 11 նիստ):



Յուցանիշ 1.12. Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում

Յուցանիշ 1.12	2012/13	2013/14	2014/15	2015/16	2016/17
Հիմնական համակազմը	1577	1548	1531	1693	1580
Հեռակա ուսուցման համակազմը	931	924	1004	1027	950
Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**59,0**	**59,69**	**65,58**	**60,66**	**60.1**

Հեռակա ուսուցման համակարգում ուսանողների թվաքանակը վերջին չորս տարիներին կազմում է հիմնական ուսանողական համակազմի 60-65%-ը: Դա պայմանավորված է ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան երկրորդ մասնագիտություն ստանալու ցանկություն ունեցող դիմորդների թվի աճով, 2012թ.-ից սկսած՝ նոր մասնագիտությունների ավելացմամբ, ինչպես նաև ուսումը աշխատանքի հետ համատեղելու հանգամանքով:





Ցուցանիշ 1.13. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ծավալում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.13	2013	2014	2015	2016	2017
Ընդունելության ընդհանուր ծավալը	408	388	353	397	338
Բակալավրիատ(առկա, վճարովի)	168	133	123	156	129
Հեռակա ուսուցում	195	216	192	201	170
Մագիստրատուրա (վճարովի)	2	0	0	0	0
Ընդամենը վճարովի	365	349	315	357	299
Հաշվեկշիռն ընդունելության ծավալում (%)	**89.5**	**89.9**	**89.2**	**89.9**	**88.5**

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռն ընդունելության ընդհանուր ծավալում համեմատաբար կայուն է (88-90%), որը պայմանավորված է վերջին հինգ տարիներին պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխատուցմամբ (անվճար) և վճարովի տեղերի համամասնությունների կայունությամբ:





Ցուցանիշ 1.14. Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.14	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական համակազմ	1548	1531	1693	1685	1580
Բակալավրիատ(առկա)	474	405	512	494	475
Հեռակա ուսուցում	903	987	1027	1039	950
Մագիստրատուրա	9	4	0	0	0
Ընդամենը վճարովի	1386	1396	1539	1533	1425
Հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	**89,5**	**91,2**	**90,9**	**91.0**	**90.2**

Վճարովի համակարգի ուսանողների հաշվեկշիռը հիմնական համակազմում վերջին 5 տարիների համար գրեթե կայուն է՝ 89%-91%: Տոկոսային բարձր ցուցանիշը պայմանավորված է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխատուցմամբ (անվճար) տեղերի սահմանափակ լինելու հանգամանքով, ինչպես նաև ուսանողական համակազմում հեռակա ուսուցման ուսանողների թվական գերակշռությամբ:





Ցուցանիշ 1.15. Ուսանողների շարժը (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի)

Ցուցանիշ 1.15	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական համակազմ	1548	1531	1693	1685	1685
Այլ բուհեր տեղափոխված բակալավրիատի ուսանողների թիվը			5	5	3
Այդ թվում՝ առկա ուսուցում					3
Այլ բուհերից տեղափոխված բակալավրիատի ուսանողների թիվը			28	30	31
Այդ թվում՝ առկա ուսուցում					9

Պետք է նշել, որ ՀՀ տարբեր բուհերից և միջին մասնագիտական հաստատություններից ներհոսք է արձանագրվել մասնաճյուղ և այն տարեցտարի աճում է: Ներհոսքի հիմնական պատճառներից են սոցիալական խնդիրները և բնակության վայրի փոփոխությունը, մասնավոր բուհից՝ պետական բուհ տեղափոխությունը կամ երկրորդ մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալը, ՄՄՈՒՀ-ի շրջանավարտների՝ բարձրագույն մասնագիտական կրթության ստանալը: Հատկապես մեծ է ներհոսքը Տավուշի տարածքային պետական քոլեջից և Դիլիջանի պետական քոլեջից: 2017-18 ուստարում այդ քոլեջներից մասնաճյուղ են տեղափոխվել 17 ուսանող:

Արտահոսքը մասնաճյուղից շատ փոքր թիվ է կազմում: 2017-18 ուստարում մասնաճյուղից տեղափոխվել է միայն 3 ուսանող: Արտահոսքի հիմնական և ամենաշատ հանդիպող պատճառը դա ամուսնության և բնակության վայրի փոփոխությունն է, լինում է նաև մասնագիտության փոփոխություն:

ԲՆԱԳԱՎԱՌ 2.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ցուցանիշ 2.1.	Անցումն առաջինից երկրորդ կուրս
Ցուցանիշ 2.2.	Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների
Ցուցանիշ 2.3.	Հիմնական դասախոսական կազմը (բաշխումն ըստ պաշտոնների, գիտական աստիճանով/առանց աստիճանի)
Ցուցանիշ 2.4.	Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)
Ցուցանիշ 2.5.	Դասախոսական կազմի տարեկան համալրումը (այդ թվում՝ ասպիրանտուրայից)
Ցուցանիշ 2.6.	Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ/ընդհանուր դասախոսների թիվ)
Ցուցանիշ 2.7.	Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը
Ցուցանիշ 2.8.	Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը
Ցուցանիշ 2.9.	Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը
Ցուցանիշ 2.10.	Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը
Ցուցանիշ 2.11.	Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը
Ցուցանիշ 2.12.	Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (այդ թվում՝ ըստ ուղղությունների)
Ցուցանիշ 2.13.	Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը
Ցուցանիշ 2.14.	Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)
Ցուցանիշ 2.15.	Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)
Ցուցանիշ 2.16.	Ուսանողների առաջադիմության դինամիկան ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի)

Յուցանիշ 2.1. Անցումն առաջինից երկրորդ կուրս /առկա ուսուցման ձև/

Յուցանիշ 2.1	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Բակալավրի ծրագրեր (%)	94	93,5	100	97,8	99,5
Մագիստրոսական ծրագրեր (%)	90	100	-	-	0.0

Առկա ուսուցման համակարգում նկատելի է առաջինից երկրորդ կուրս անցման կայուն ցուցանիշ. 2017-2018 ուստարում առաջինից երկրորդ կուրս է փոխադրվել ուսանողների 99.5%-ը:

2014թ.-ից մագիստրոսական կրթական ծրագրով մասնաճյուղում ընդունելություն չի իրականացվել:



Յուցանիշ 2.2. Շրջանավարտներն ըստ կրթական աստիճանների

Յուցանիշ 2.2	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Բակալավրիատի ավարտական կուրսի ուսանողների թիվը	392	189	350	419	271
Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը	393	188	350	416	271
Ավարտած ուսանողների տեսակարար կշիռը (%)	100.3%	99.5%	100.0%	99.3%	100.0%
Մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանողների թիվը			0	0	0
Ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը	9	4	0	0	0
Ավարտած ուսանողների տեսակարար կշիռը (%)					



2017-2018 ուստարում ամփոփիչ ատեստավորումը հաղթահարել են թվով 271 ուսանողներ (138-ը՝ առկա ուսուցման համակարգում և 133-ը՝ հեռակա ուսուցման համակարգում), այդ թվում 127 շրջանավարտներ ավարտել են հումանիտար գիտությունների ֆակուլտետը, 40-ը՝ բնական գիտությունների, 86-ը՝ տնտեսագիտության և 18-ը՝ կիրառական արվեստի ֆակուլտետները: Նախորդ տարիների համեմատությամբ 2017-2018 ուստարում շրջանավարտների թիվը աճել է միայն Կիրառական արվեստի ֆակուլտետում: Մյուս ֆակուլտետներում շրջանավարտների թվի նվազումը պայմանավորված 2013-2014 ուստարվա հեռակա ուսուցմամբ և 2014-2015 ուստարվա առկա ուսուցմամբ ԵՊՀ ԻՄ ընդունվածների թվով: Ուղղակի պետք է նշել, որ մասնաճյուղի ավարտական կուրսերի ուսանողները բոլորը (բացառությամբ մեկ-երկու դեպքերի) հաղթահարում են ամփոփիչ ատեստավորումը:

Ցուցանիշ 2.3. Հիմնական դասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսներ)

Ցուցանիշ 2.3	2013/14		2014/15		2015/16		2016/17		2017/18	
Պրոֆեսոր	3	**3.1%**	3	**3.2%**	3	**3.1%**	3	**3.1%**	4	**4.2%**
Դոցենտ	27	**27.8%**	25	**26.6%**	28	**28.9%**	29	**29.9%**	26	**27.4%**
Ասիստենտ և դասախոս	67	**69.1%**	66	**70.2%**	66	**68.0%**	65	**67.0%**	65	**68.4%**
Ընդամենը	97	**100%**	94	**100%**	97	**100%**	97	**100%**	95	**100%**
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	38	**39.2%**	38	**40.4%**	45	**46.4%**	53	**54.6%**	52	**54.7%**

Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը վերջին 2 ուսումնական տարիներին աճել է և կազմում է դասախոսական կազմի գրեթե 55%-ը, որը լավ ցուցանիշ է: Այն պայմանավորված է երիտասարդ կադրերի գիտական ձեռքբերումներով և նաև մայր բուհից գիտական աստիճանով պրոֆեսորա-դասախոսական կազմի համալրմամբ:





Ցուցանիշ 2.3.1. Հիմնական դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից ներքին համատեղության կարգով հրավիրված դասախոսների)

Ցուցանիշ 2.3	2017/18	
Պրոֆեսոր	0	0.0%
Դոցենտ	14	20.6%
Ասիստենտ և դասախոս	54	79.4%
Ընդամենը	68	
Այդ թվում՝ **գիտ. աստիճանով**	**30**	**44.1%**
Միայն ԵՊՀ ԻՄ-ում ուսումնագի-տական գործունեություն ծավալող դասախոսների թիվը	17	25.0%
Այդ թվում՝ պետական համակարգի ղեկավար կազմի աշխատակից	13	19.1%
Այդ թվում՝ մասնավոր ոլորտի ղեկավար կազմի աշխատակից	0	0.0%

2017-18 ուստարում մասնաճյուղի դասախոսական կազմում (95) առանց ԵՊՀ-ից ներքին համատեղությամբ հրավիրվածների դասավանդել են 68 դասախոսներ (71.6%)։ Եվ պետք է նշել, որ դոցենտի պաշտոնով աշխատել է հիմնական դասախոսական կազմի 53.8% -ը, այդ թվում 57.7%-ը՝ գիտական աստիճանով։ Այսինքն մասնաճյուղը վարում է որակյալ հիմնական դասախոսական կազմ ստեղծելու քաղաքականություն և մշտապես աջակցում է երիտասարդ դասախոսների առաջընթացին։



Յուցանիշ 2.4. Դասախոսական կազմի (լրիվ հաստիքային համարժեքով) բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

Յուցանիշ 2.4	2013/14		2014/15		2015/16		2016/17		2017/18	
Հիմնական և համատեղութ.	109	**90.8%**	111	**88.1%**	120	**81.6%**	126	**79.7%**	**118**	**71.5%**
Ժամավճար	11	**9.2%**	15	**11.9%**	27	**18.4%**	32	**20.3%**	**47**	**28.5%**
Ընդամենը	**120**		**126**		**147**		**158**		**165**	

Հիմնական և համատեղությամբ դասավանդող դասախոսների թիվը վերջին 5 տարիների համար հիմնականում կայուն է՝ 110-125 դասախոս: Այն 2013-15թթ. նվազել էր առկա ուուցման ձևում մեկ կուրս չլինելու պատճառով, որն անդրադարձել էր ամբիոնային ծանրաբեռնվածությունների նվազման վրա:

Ժամավճարային հիմունքով դասավանդողների տոկոսը փոփոխական է, որը կախված է տվյալ ուստարվա առանձնահատկություններից, նոր մասնագիտություններում նեղ մասնագիտական դասընթացներով և հեռակա ուսուցման համակարգում նոր դասավանդողների ներառմամբ: Այն արտահայտվել է ժամավճարով աշխատող դասախոսների քանակի ավելացման վրա. վերջին 3 ուստարիներին այդ թիվն էապես աճել է:





Յուցանիշ 2.5. Դասախոսական կազմի տարեկան համալրումը

Յուցանիշ 2.5	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Դասախոսական կազմի համալրումը	0	-4	3	0	-2
Աշխատանքի ընդունված դասախոսների թիվը					
Հիմնական դասախոսական կազմ	97	94	97	97	95

Հիմնական դասախոսական կազմի թվաքանակը էական փոփոխության չի ենթարկվել, քանի որ մասնագիտությունների քանակում, դասարնթացների ժամաքանակներում, ամբիոնային ծանրաբեռնվածություններում էական փոփոխություններ չեն կատարվել:



Յուցանիշ 2.6. Դասախոսական հաստիքների օգտագործման գործակիցը (հաստիքների թիվ-ընդհանուր դասախոսների թիվ)

Յուցանիշ 2.6	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ընդհանուր դասախոսական կազմ	109	111	120	126	118
Հաստիքներ	74.75	79	86.5	84	77.75
Հաստիքների թիվ/դասախոսների թիվ հարաբերակցությունը	**0.69**	**0.71**	**0.72**	**0.67**	**0.66**

Վերջին 5 տարիների ընթացքում հաստիքների օգտագործման գործակիցը համեմատաբար կայուն է՝ **0,66-0,72**: Դա պայմանավորված է ծանրաբեռնվածության հստակ նորմատիվների պահպանմամբ և դասավանդողների նեղ մասնագիտացմամբ: Եվ այդ թիվը 1-ից փոքր է, որովհետև դասախոսական կազմից որոշակի հաստիքային ծանրաբեռնվածությամբ ներգրավված են նաև ուսումնական գործընթացի կազմակերպման և որակի ապահովման ներքին գործընթացների իրականացման աշխատանքներում: Վերջին 2 ուստարիների համեմատաբար փոքր թիվը պայմանավորված է հաստիքների նվազմամբ (այսինքն ամբիոնային ծանրաբեռնվածությունների նվազմամբ) և դասախոսների թվաքանակի ավելացմամբ:





Ցուցանիշ 2.7. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը

Ցուցանիշ 2.7	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ընդամենը՝ հիմնական դասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված)	97	94	97	97	95
Մինչև 35 տարեկան	25	23	21	17	17
35-65 տարեկան	62	63	68	69	67
65-ից բարձր	10	8	8	11	11
Միջին տարիք	**47.7**	**47.6**	**48.0**	**49.1**	**49.1**
Ընդամենը՝ հիմնական դասախոսական կազմը (առանց ԵՊՀ-ից համատեղ. հրավիրված)					68
Մինչև 35 տարեկան					14
35-65 տարեկան					50
65-ից բարձր					4
Միջին տարիք					47.8

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմը կայուն է: Պահպանվել են դասախոսական կազմում տարիքային բաշխման մասնաբաժինները, և միջին տարիքը կազմում է 48-49, որը տարածաշրջանային բուհի համար լավ ցուցանիշ է: Իսկ հիմնական դասախոսական կազմի միջին տարիքը 2017-18 ուստարում եղել է 48:





Յուցանիշ 2.8. Որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը

Յուցանիշ 2.8	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Մասնագիտական	7	43	2		
Մանկավարժական	77	5	1		
Համակարգչային	4	8			
Այլ	7	31			
Մեկ ուսումնական տարում որակավորման բարձրացում անցած դասախոսների թիվը	***95***	***87***	***3***	***0***	***0***

2011-16թթ. մասնաճյուղում իրականացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2010թ.-ի նոյեմբերի 18-ի թիվ 7 նիստում հաստատված Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը, որի շրջանակներում մասնագիտական, մանկավարժական և համակարգչային համապատասխան դասընթաց-ներով որակավորման բարձրացում են անցել մասնաճյուղի դասախոսական կազմի 90-95%-ը:

2016-17 ուստարվա ընթացքում մասնաճյուղում դասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներ չեն իրականացվել: ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017թ. փետրվարի 11-ի թիվ 22 նիստում հաստատվել է նոր կրթագիտական ծրագիրը՝ «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2017-2021 թթ.)» , որով սկսվել է կրթագիտական ծրագրի իրականացման երկրորդ փուլը: Այդ ծրագրի շրջանակներում դեռ վերապատրաստման դասընթացների չեն կազմակերպվել:

Ցուցանիշ 2.9. Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը

Ցուցանիշ 2.9	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական դասախոսական կազմ	97	94	97	97	95
Իգական սեռի դասախոսներ	61	50	43	51	52
Իգական սեռի հաշվեկշիռը (%)	**62.9**	**53.2**	**44.3**	**52.6**	**54.7**

Վերջին 5 ուստարիներին հիմնական դասախոսական կազմում իգական սեռի մասնաբաժինը հիմնականում կազմում է ավելի քան 50%, որը պայմանավորված է տարածաշրջանի ժողովրդագրական պատկերով, և մասնաճյուղի համար կարելի է համարել լավ ցուցանիշ է: 2015-16 ուստարվա համար այն կազմել է 44.3%, ինչը հիմնականում պայմանավորված է մայր բուհից հիմնականում տղամարդ դասախոսների ներգրավմամբ և նոր երիտասարդ կադրերով համալրմամբ:





Յուցանիշ 2.10. Ուսանող/դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերությունը

Յուցանիշ 2.10	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ուսանողներ	1548	1531	1693	1685	1580
Դասախոսական հաստիքներ	74.75	79	86.5	84	77.75
Ուսանող/դասախոս հարաբերությունը	**20.71**	**19.38**	**19.57**	**20.06**	**20.32**

Վերջին 5 տարիների կտրվածքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը համեմատաբար կայուն է՝ պայմանավորված ուսանողների թվի և դասախոսական հաստիքների համամասնական փոփոխությամբ:

Ուսանողների թվաքանակն ընդգրկում է նաև հեռակա ուսուցման համակարգով սովորողներին:





Ցուցանիշ 2.11. Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը

Ցուցանիշ 2.11	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ուսանողներ	1548	1531	1693	1685	1580
Ուսումնաօժանդակ կազմ	26	25	24	27	28
Ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը	**59.54**	**61.24**	**70.54**	**62.41**	**56.43**

2013-15թթ. տարիներին նկատվել է ցուցանիշի կայունություն, որը պայմանավորված է ուսանողների թվաքանակի որոշակի նվազմամբ (պատճառը մեկ կուրսի բացակայությունն է) և ուսումնաօժանդակ կազմի քիչ փոփոխությամբ, իսկ 2015-16 ուստարում այդ ցուցանիշը հասել է գրեթե 71-ի, ինչը պայմանավորված է ուսանողների թվաքանակի աճով և ուսումնաօժանդակ անձնակազմի թվաքանակի օպտիմալացմամբ:





Յուցանիշ 2.12. Դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը (ըստ ուղղությունների)

Յուցանիշ 2.12	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	886	881	825,9	929,1	730.85
Բնական գիտությունների ֆակուլտետ	818	903	761,9	968,3	802.6
Տնտեսագիտության ֆակուլտետ	785	876,75	885,6	886,1	903.1
Կիրառական արվեստի ֆակուլտետ	676	836,25	730,4	675,2	651.05
Համահամալսարանական ամբիոններ	687	976,5	875,6	763,2	722.7
Համահամալսարանական միջինը	**770**	**811,8**	**815,9**	**844,4**	**762.1**

Դասախոսի միջին տարեկան բեռնվածությունը, սահմանված նորմերի համաձայն, կազմում է 700-800 ժամ: 2017-2018 ուստարում մասնաճյուղում դասախոսի միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանված նորմատիվից ցածր է Կիրառական արվեստի ֆակուլտետում, բարձր է Տնտեսագիտության ֆակուլտետում, արդյունքում մասնաճյուղում դասախոսի միջին ուսումնական բեռնվածությունը կազմում է 762.06 ժամ, որը նորմայի սահմաններում է:











Յուցանիշ 2.13. Հրատարակված ուսումնամեթոդական նյութերի և մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների քանակը

Յուցանիշ 2.13	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի թիվը	8	15	16	7	1
Գիտամեթոդական ձեռնարկների թիվը					
Հիմնական դասախոսական կազմը	97	94	97	97	65
Մեկ դասախոսին ընկնող մեթոդական հրատարակությունների թիվը	**0.08**	**0.16**	**0.16**	**0.07**	**0.02**

Վերջին երկու տարիներին ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի թիվը պակասել է, քանի որ որպես ցուցանիշ ներկայացված է միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից հրատարակած նյութերի թիվը: Այդ թվերը ցույց են տալիս, որ մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմը ակտիվ չէ ուսումնամեթոդական աշխատանքներ ներկայացնելու գործում:





Յուցանիշ 2.14. Առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը (ըստ ֆակուլտետների)

Յուցանիշ 2.14	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ(%)	74,1	74,9	88,4	87.0	89.0
Բնական գիտությունների ֆակուլտետ (%)	50,8	66,2	76,6	77.1	62.7
Տնտեսագիտության ֆակուլտետ (%)	59,6	60,6	76,5	72.4	67.3
Կիրառական արվեստի ֆակուլտետ (%)	57,9	76,4	78	93.1	83.3
Միջին տարեկան ցուցանիշը(%)	60,6	69,5	79,9	82.4	75.6

2017-2018 ուստարում գրանցված առաջադիմության (լուծարքային շրջանից առաջ) միջին տարեկան ցուցանիշը թեև գերազանցում է 2013-2014 և 2014-2015 ուստարիների ցուցանիշները այնուամենայնիվ նվազել է նախորդ երկու տարիների համեմատությամբ: Ըստ ֆակուլտետների՝ նախորդ տարվա համեմատությամբ ցուցանիշները նվազել են բոլոր ֆակուլտետներում բացի Հումանիտար գիտությունների ֆակուլտետից:





Յուցանիշ 2.15. Ուսանողական հարցման արդյունքները (ըստ ֆակուլտետների)

Յուցանիշ 2.15	2013/14		2014/15		2015/16		2016/17		2017/18	
	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.	I կիս.	II կիս.
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	4,62	4,54	4,58	4,49	4,58	4,63	4,68	4.62	4.59	
Բնական գիտությունների ֆակուլտետ	4,47	4,46	4,56	4,56	4,56	4,62	4,40	4.49	4.48	
Տնտեսագիտական ֆակուլտետ	4,58	4,66	4,73	4,74	4,66	4,78	4,81	4.76	4.67	
Կիրառական արվեստի ֆակուլտետ	4,78	4,72	4,78	4,8	4,76	4,86	4,81	4.77	4.69	
Համահամալսարանական ամբիոններ	4,56	4,56	4,58	4,53	4,56	4,56	4,54	4.55	4.78	

Ուսանողների կողմից դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման հարցաթերթիկում հարցերը գնահատվում են 5-միավորանոց սանդղակով: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներից, վարչական և ուսումնաօժանդակ ծառայություններից: 2016-2017ուստարվա երկրորդ կիսամյակի հարցման արդյունքներով ամենաբարձր միավորը գրանցվել է Կիրառական արվեստի ֆակուլտետում, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետում: 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի հարցման արդյունքներով ամենաբարձր միավորը գրանցվել է Համահամալսարանական ամբիոնում, իսկ ամենացածրը՝ Բնական գիտությունների ֆակուլտետում:



Յուցանիշ 2.16. Ուսանողների առաջադիմության դինամիկան ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ-երի)

Յուցանիշ 2.14	2016/17	2017/18
Բակալավրիատի ուսանողների թիվը, այդ թվում.	**652**	**638**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	349	327
Բնական գիտությունների ֆակուլտետ	85	103
Տնտեսագիտության ֆակուլտետ	151	145
Կիրառական արվեստի ֆակուլտետ	67	63
85%-ից բարձր ՄՈԳ գրանցած ուսանողների թիվը, այդ թվում.	**192**	**176**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	115	102
Բնական գիտությունների ֆակուլտետ	16	20
Տնտեսագիտության ֆակուլտետ	42	38
Կիրառական արվեստի ֆակուլտետ	19	16
ՄՈԳ-ը բարելաված ուսանողների թիվը (առնվազն 5%)	**318**	**275**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	161	134
Բնական գիտությունների ֆակուլտետ	44	50
Տնտեսագիտության ֆակուլտետ	75	69
Կիրառական արվեստի ֆակուլտետ	38	22
ՄՈԳ-ը իջեցրած ուսանողների թիվը (առնվազն 5%)	**142**	**187**
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	73	91
Բնական գիտությունների ֆակուլտետ	25	33
Տնտեսագիտության ֆակուլտետ	34	38
Կիրառական արվեստի ֆակուլտետ	10	25

Վերջին երկու տարիներին ԳԱՑ-ին ավելացվել է նաև այս՝ 2.16 ցուցանիշը, որով ներկայացվում է մասնաճյուղի ուսումնառողների առաջադիմության դինամիկան: Այդ թվերը ցույց են տալիս, որ 2017-18 ուստարում բնական գիտությունների ֆակուլտետում գրանցվել է ՄՈԳ-ի բարձրացում և բարելավում, թեպետ գրանցվել է նաև իջերած ուսանողների թվի աճ: Ընդհանուր առմամբ ֆակուլտետներում այդ ցուցանիշները կայուն են, և ներկայացված թվերը ցույց են տալիս, որ նախորդ՝ 2016-17 ուստարվա համեմատ առաջին 2 ցուցանիշները (85%-ից բարձր ՄՈԳ գրանցած ուսանողների թիվը, ՄՈԳ-ը բարելաված ուսանողների թիվը (առնվազն 5%)) նվազել են, իսկ 3-րդ ցուցանիշը՝ ՄՈԳ-ը իջեցրած ուսանողների թիվը (առնվազն 5%) ընդհակառակը աճել է, իսկ դա ցույց է տալիս, որ նվազել է ուսանողների առաջադիմությունը:



ԲՆԱԳԱՎԱՌ 3.

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Յուցանիշ 3.1.	Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող/աշխատող
Յուցանիշ 3.2.	Դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը
Յուցանիշ 3.3.	Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)
Յուցանիշ 3.4.	Տարեկան բյուջեն (տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հազար դրամ)
Յուցանիշ 3.5.	Օպերատիվ բյուջեն (ծախսերի ծավալ/ուսանող և մուտքերի ծավալ/ուսանող հարաբերակցությունները, հազար դրամ)
Յուցանիշ 3.6.	Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հազար դրամ)
Յուցանիշ 3.7.	Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հազար դրամ)
Յուցանիշ 3.8.	Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում
Յուցանիշ 3.9.	Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հազար դրամ)
Յուցանիշ 3.10.	Ուսման միջին վարձաչափը (հազար դրամ)
Յուցանիշ 3.11.	Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին
Յուցանիշ 3.12.	Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ/ծախսեր հարաբերակցությունը
Յուցանիշ 3.13.	Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը
Յուցանիշ 3.14.	Ծախսերի ծավալ/բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը
Յուցանիշ 3.15.	Հարկերի ծավալ/փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.1. Աշխատողների ընդհանուր թիվը, ուսանող-աշխատող հարաբերակցությունը

Յուցանիշ 3.1	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Աշխատողների ընդհանուր թիվը	206	199	226	245	243
Ուսանողների թիվը	1548	1531	1693	1685	1580
Ուսանող/աշխատող հարաբերակցությունը	**7.5**	**7.7**	**7.5**	**6.9**	**6.5**

Վերջին 3 ուստարիներին ուսանողների թվի աճմանը զուգահեռ ավելացել է նաև մասնաճյուղի աշխատակիցների ընդհանուր թիվը, որի արդյունքում ուսանող-աշխատող հարաբերությունը վերջին 5 ուստարիների համար համեմատաբար կայուն է՝ 6.9-7.7 միջակայքում: Ուղղակի հարկ է նշել, որ աշխատողների քանակն ավելացել է հիմնականում ժամավճարով աշխատող դասախոսների հաշվին, որոնք հիմնականում իրականացնում են մասնագիտական դասընթացներ:





Ցուցանիշ 3.2. Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.2	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Դասախոսական կազմը	109	111	120	126	118
Ուսումնաօժադակ և վարչական կազմ	85	75	76	81	83
Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը	**1.28**	**1.48**	**1.58**	**1.56**	**1.42**

Պայմանավորված ուսումնաօժանդակ և վարչական կազմերի օպտիմալացումով՝ վերջին 4 ուստարիներին դասախոսական կազմ- ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցության ցուցանիշը հիմնականում կայուն է:





Յուցանիշ 3.3. Աշխատողների հոսունությունը՝ ընդունված/ազատված (%)

Յուցանիշ 3.3	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Դասախոսական կազմում (%)	41.3	36.9	4.24	1.96	1.05
Ընդհանուրում (%)	27.6	26.6	6.8	0.97	0.97

Աշխատողների հոսունության ցուցանիշները պայմանավորված են ժամավճարային հիմունքներով դասավանդողների բաժնեմասով և Երևանից հրավիրված այն մասնագետների փոփոխությամբ, որոնք չեն հարմարվում երկար ճանապարհին: Սակայն վերջին տարիներին ցուցանիշի նվազման միտում է նկատվում, ինչը վկայում է աշխատողների կայունության աճի մասին:



Ցուցանիշ 3.4. Տարեկան բյուջեն
(տարեկան ընդհանուր եկամուտը՝ ֆինանսական և նյութական, հզ. դր.)

Ցուցանիշ 3.4	2013	2014	2015	2016	2017
Դրամական միջոցները տարեսկզբին	148820	220346	272955	128810	217100
Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	332564	348175	348714	379585	379359
Եկամուտներ պետական բյուջեից	82209	82070	97641	116979	120180
Այլ եկամուտներ	14544	17367	27146	26065	38256
Ընդամենը տարեկան եկամուտներ	**429317**	**447612**	**473501**	**522629**	**537795**
Տարեկան բյուջեն	**578137**	**667958**	**746456**	**651439**	**754895**

2017թ-ին մասնաճյուղի եկամուտները վճարովի ուսուցման ծառայությունից 2013թ-ի համեմատ աճել են 14,1%-ով, իսկ պետական բյուջեից եկամուտները վերջին 4 տարիներին աճել են, մասնավորապես 2017 թվի եկամուտները պետական բյուջեից 2013-ի համեմատ աճել է 46,2%-ով, որը հիմնականում պայմանավորված է վճարովի ուսուցման համակարգում ուսանողների թվի ավելացմամբ, վարձավճարների բարձրացմամբ, ինչպես նաև պետության կողմից հատկացվող անվճար տեղերի թվի կրճատմամբ: 2017թ-ին մասնաճյուղի տարեկան բյուջեն 2013թ-ի համեմատ աճել է 30,6%-ով, իսկ ընդհանուր տարեկան եկամուտները՝ 25,3%-ով: Տարեկան բյուջեի աճի մեջ իր ազդեցությունն ունի նախորդ տարվանից փոխանցված դրամական համեմատաբար մեծ միջոցները:









Ցուցանիշ 3.5. Օպերատիվ բյուջեն
(ծախսերի ծավալ-ուսանող և մուտքերի ծավալ-ուսանող հարաբերակցությունները, հզ. դր.)

Ցուցանիշ 3.5	2013	2014	2015	2016	2017
Ուսանողների թիվը	1535	1552	1517	1565	1580
Եկամուտների ծավալ	578137	667958	746456	651439	754895
Եկամուտների ծավալ/ուսանող հարաբերակցությունը	**376.6**	**430.4**	**492.1**	**416.3**	**477.8**
Ծախսերի ծավալ	348782	372427	417723	435513	428818
Ծախսերի ծավալ/ուսանող հարաբերակցությունը	**227.2**	**240.0**	**275.4**	**278.3**	**271.4**

2017թ-ին մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալը 2016թ-ի համեմատ աճել է մասնաճյուղի եկամուտնելի ծավալի աճման արդյունքում, նույնիսկ այն դեպքում, որ ուսանողների քանակը 2016-ի նկատմամբ ավելացել է: Իսկ 2017թ-ին մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է, ինչը կապված է 2016թ-ին իրականացված տեխնիկական վերազինման և գրականության ձեռքբերման մեծ ծախսերի հետ՝ լսարանները տեխնիկապես հագեցվել են և համակարգչային սրահները համալրվել, ձեռք է բերվել նոր մասնագիտական գրականություն, կատարվել է ուսումնական տարածքի վերանորոգում:





Յուցանիշ 3.6. Տարեվերջից տեղափոխվող մնացորդը (հզ. դր.)

Յուցանիշ 3.6	2013	2014	2015	2016	2017
Տարեվերջից տեղափոխվող մնացորդը	220 346	272 955	128 810	217 100	234167

Տարեվերջից տեղափոխվող մնացորդը վերջին 5 տարիների համար գերազանցում է 200000 հզ. դրամը (բացի 2015թ.-ից), որն իր արտահայտությունն է գտնում տարվա տարեկան բյուջեում: 2017թ-ին փոխանցված մնացորդը նախորդ տարվա գումարից ավել է 7,9%-ով, ինչը վկայում է նախորդ տարում խնայողությանն ուղղված գործունեության մասին:





Ցուցանիշ 3.7. Արտաբյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների, ընդհանուր), հաշվեկշիռը մուտքերում (հզ. դր.)

Ցուցանիշ 3.7	2013	2014	2015	2016	2017
Ընդամենը տարեկան եկամուտներ	429317	447612	473501	522629	537795
Արտաբյուջետային մուտքեր, այդ թվում՝	**347109**	**365542**	**375860**	**405650**	**417614**
Վճարովի ուսուցման ծառայությունից	332564	348175	348714	379585	379359
Բարեգործական եկամուտներ	0	0	640	461	914
Առևտրային բանկերում ավանդ ձևակերպված գումարներից ստացվող %-ներից եկամուտներ	10445	12707	21500	21888	32999
Այլ եկամուտներ	4100	4660	5006	3716	4342
Տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտներում (%)	**80.9**	**81.7**	**79.4**	**77.6**	**77.7**

Վերջին 3 տարիներին արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր տարեկան եկամուտների մեջ նվազել է: Այն 2017թ-ի համար կազմում է մոտ 78%: Արտաբյուջետային միջոցների 90,8%-ը 2017թ-ի համար կազմում են վճարովի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտները, ընդ որում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտների ծավալը վերջին տարիներին նվազել է վճարովի ուսանողների թվի նվազման պատճառով: Բարեգործական և այլ եկամուտները կայուն չեն, իսկ դրամաշնորհներ և լրացուցիչ կրթական դասընթացներ չունենալու պատճառով մուտքերը 0-ական են:







Յուցանիշ 3.8. Ուսումնական (ուսուցման) ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հզ. դր.)

Յուցանիշ 3.8	2013	2014	2015	2016	2017
Տարեկան ընդհանուր ծախսեր	348782	372427	417723	435513	428818
Ուսումնական ծախսեր	160500	171600	200500	210400	205800
Ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%)	**46.0**	**46.1**	**48.0**	**48.3**	**48.0**

2017թ.-ին 2013թ.-ի համեմատ ուսումնական ծախսերն աճել են մոտ 28%-ով (2012թ-ի համեմատ՝ 36,9%-ով), այն դեպքում, երբ տարեկան ընդհանուր ծախսերը 2013թ.-ի համեմատ աճել են ընդամենը 22%-ով: Հետևաբար, տարեկան ընդհանուր ծախսերում ուսումնական ծախսերի հաշվեկշիռը վերջին 5 տարիների համար մեծացել է, սակայն այն համեմատաբար կայուն է և գտնվում է 46%-48,3% միջակայքում: 2013թ-ի համեմատ զգալի աճել են նաև մեկ ուսանողին ընկնող ուսումնական ծախսերը՝ 24,6% :







Յուցանիշ 3.9. Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (հզ. դր)

Յուցանիշ 3.9	2013	2014	2015	2016	2017
Տարեկան ընդհանուր ծախսեր	348782	372427	417723	435513	428818
Ուսումնաօժանդակ ծախսեր	36810	37500	42700	48300	47600
Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը (%)	10.6	10.1	10.2	11.1	11.1

Վերջին 5 տարիների ընթացքում ուսումնաօժանդակական ծախսերն աճել են ավելի քան 29%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ այն 1%-ով նվազել է: Ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը 2013-2018 տարիների ընթացքում համեմատաբար կայուն է եղել և կազմել է 10%-11%, որը հիմնավորում է օպտիմալ ուսումնաօժանդակ անձնակազմի և անհրաժեշտ պայմանների առկայությունը:







Յուցանիշ 3.10. Ուսման միջին վարձաչափը (հզ. դր.)

Յուցանիշ 3.10	2013	2014	2015	2016	2017
ՀՀ քաղաքացիների համար միջին վարձաչափը	250	260	300	320	320

Ուսման միջին վարձաչափը վերջին 3 տարիներին աճել է, մասնավորապես 2013թ.-ի համեմատ աճել է 28%-ով, որը հիմնականում պայմանավորված է ուսումնառության համար անհրաժեշտ ծախսերի ավելացմամբ:



Յուցանիշ 3.11. Դասախոսական կազմի միջին աշխատավարձը, հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին

Յուցանիշ 3.11	2013	2014	2015	2016	2017
Պրոֆեսոր	129730	152703	167327	167327	**167327**
Դոցենտ	125676	145946	160052	160052	**160052**
Ասիստենտ և դասախոս	120270	139189	152777	152777	**152777**
Դասախոսական միջին աշխատավարձը	124324	145946	161871	161871	**161871**
ՀՀ միջին աշխատավարձը	146524	158580	171615	174445	**177817**
Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին	**0.85**	**0.92**	**0.94**	**0.93**	**0.86**

Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին 2015թ.-ից հետո նվազել է, որը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական կազմի միջին աշխատավարձի անփոփոխ, իսկ հայաստանյան պաշտոնական միջին աշխատավարձի աճի տեմպերով: Թեպետ այն մոտավորապես 20000 դրամով ցածր է ՀՀ միջին աշխատավարձից, սակայն պետք է նշել, որ 2013թ.-ի համեմատ դասախոսական միջին աշխատավարձը աճել է 30,2%-ով, այն դեպքում, երբ հայաստանյան միջին աշխատավարձը աճել է 21,4%-ով:







Ցուցանիշ 3.12. Աշխատավարձ և եկամտային հարկ-ծախսեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.12	2013	2014	2015	2016	2017
Աշխատանքի վարձատրության ծախսեր (հզ.դր.)	212759	227264	257686	267613	269447
Եկամտային հարկ (հզ. դր.)	66097	74550	84864	91461	88813
Ընդամենը աշխատավարձի և սոց. վճարների ծախսեր (հզ. դր.)	278856	301814	342550	359074	358260
Տարեկան ընդհանուր ծախսեր (հզ. դր.)	348782	372427	417723	435513	428818
Աշխատավարձ և սոցիալական հատկացումներ /ծախսեր հարաբերակցությունը	**0.80**	**0.81**	**0.82**	**0.82**	**0.84**

Ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռում են աշխատանքի վարձատրության և եկամտային հարկի ծախսերը՝ 80%-84%, (ինչը պայմանավորված է կազմակերպության գործունեության բնույթով, կազմակերպա-իրավական ձևով), ընդ որում՝ այդ ցուցանիշը վերջին տարիներին թեպետ քիչ, բայց աճել է, ինչը հիմնավորվում է հարկային համապատասխան օրենքների փոփոխու-թյուններով (եկամտային հարկի):











Ցուցանիշ 3.13. Արտաբյուջետային մուտքեր-բյուջետային մուտքեր հարաբերակցությունը

Ցուցանիշ 3.13	2013	2014	2015	2016	2017
Արտաբյուջետային մուտքեր (հզ. դր.)	347109	365542	375860	405650	417614
Պետական բյուջեից ստացվող մուտքեր (հզ. դր.)	82209	82070	97641	116979	120180
Արտաբյուջետային մուտքեր/բյուջետային մուտքեր հարաբերակցությունը	4.2	4.5	3.8	3.5	3.5

2013-14թթ. այս ցուցանիշի աճը (4.2-4.5) պայմանավորված է պետական բյուջեից մուտքերի նվազմամբ՝ պայմանավորված ուսանողների և աշխատակազմի թվի նվազմամբ՝ մեկ կուրս չունենալու պատճառով և արտաբյուջետային մուտքերի անընդհատ աճով՝ պայմանավորված վճարովի տեղերի թվի ավելացմամբ, այլ եկամուտների ձևավորմամբ: 2015թ.-ից այդ ցուցանիշը սկսել է նվազել պետական բյուջեից մուտքերի ծավալի մեծացման հաշվին:





Յուցանիշ 3.14. Ծախսերի ծավալ-բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը

Յուցանիշ 3.14	2013	2014	2015	2016	2017
Բյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	82209	82070	97641	116979	120180
Արտաբյուջետային ծախսերի ծավալ (հզ. դր.)	266573	290357	320082	318534	308638
Ծախսերի ընդհանուր ծավալ (հզ. դր.)	348782	372427	417723	435513	428818
Ծախսերի ծավալ/ բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը	**4.24**	**4.54**	**4.28**	**3.72**	**3.57**

2017թ-ին ծախսերի ընդհանուր ծավալ և բյուջետային ծախսերի ծավալ հարաբերակցությունը 2014թ.-ից հետո նվազել է, որը պայմանավորված է բյուջետային ծախսերի ծավալի ավելացմամբ և ընդհանուր ծախսերի ծավալի նվազմամբ, այդ թվում նաև արտաբյուջետային ծախսերի նվազմամբ: Ծախսերի ծավալի նվազումը պայմանավորված է այն բանով, որ մասնաճյուղում նոր նյութական ձեռքբերումների մեծ ծավալի անհրաժեշտությունը պակասել է դրանց անհրաժեշտ քանակի առկայության շնորհիվ:







Յուցանիշ 3.15. Հարկերի ծավալ - փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը

Յուցանիշ 3.16	2013	2014	2015	2016	2017
ԵՊՀ ԻՄ-ի կողմից պետական բյուջե վճարվող հարկեր (հզ. դր.)	66475	78783	84864	102926	111496
Պետական բյուջեից ԵՊՀ ԻՄ ֆինանսավորման չափը (հզ. դր.)	82209	82070	97641	116979	120180
Հարկերի ծավալ / փաստական պետական մուտքեր հարաբերակցությունը	**0.81**	**0.96**	**0.87**	**0.88**	**0.93**

Պետական բյուջեից ԵՊՀ ԻՄ-ի ֆինանսավորման ծավալները 2013-2014թ.թ. նվազել է և նրանց համապատասխանաբար 81%-96%-ը ԵՊՀ ԻՄ-ի կողմից հետ է վերադարձվել պետական բյուջե՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսքով: 2015թ.-ից պետական բյուջեից ֆինանսավորման չափը սկսել է ավելանալ: Միայն 2016թ.-ին ԵՊՀ ԻՄ-ի կողմից պետական բյուջե վճարվող հարկերի ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 21.3%-ով, այն դեպքում, երբ պետական բյուջեից մասնաճյուղի ֆինանսավորումն աճել է 19.8%-ով: Իսկ 2017թ.-ին պետական բյուջեից մասնաճյուղի ֆինանսավորումը նախորդ տարվա համեմատ աճել է ընդամենը 2.7%-ով, իսկ ԵՊՀ ԻՄ-ի կողմից պետական բյուջե վճարվող հարկերը աճել են 8.3%-ով:







ԲՆԱԳԱՎԱՌ 4.

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Յուցանիշ 4.1.	Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը
Յուցանիշ 4.2.	Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը
Յուցանիշ 4.3.	Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը
Յուցանիշ 4.4.	Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում
Յուցանիշ 4.5.	Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը
Յուցանիշ 4.6.	Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ ուսանողների և դասախոսների թվին
Յուցանիշ 4.7.	Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ ծախսերի համագումարում
Յուցանիշ 4.8.	Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը
Յուցանիշ 4.9.	Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը
Յուցանիշ 4.10.	Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Յուցանիշ 4.1. Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը

Յուցանիշ 4.1	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
ԵՊՀ ԻՄ ընդհանուր տարածքը /մ ²/	13195	13195	13195	13195	13195
Ուսանողների թիվը	1548	1531	1693	1685	1580
Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը /մ²/	**8.5**	**8.6**	**7.8**	**7.8**	**8.4**

Մեկ ուսանողին բաժին ընկնող ընդհանուր տարածքը մինչև 2014-15 ուստարին ավելացել է ուսանողների թվի նվազման հաշվին, որը պայմանավորված է 2011-12 ուստարվանից մինչև 2014-15 ուստարին ներառյալ առկա ուսուցման համակարգում մեկ կուրսի բացակայությամբ: 2015-16 ուստարում ուսանողների թվաքանակն ավելացել է կուրսերի ամբողջացման հաշվին, որի հետևանքով մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը նվազել է: Իսկ 2017-18 ուստարում դիմորդների քանակի նվազման պատճառով (և առկա, և հեռակա ուսուցման համակարգերում) նվազել է ուսանողների թվաքանակը, որն անդրադարձել է մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքի մակերեսի ավելացման վրա:





Ցուցանիշ 4.2. Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը

Ցուցանիշ 4.2	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ուսումնական տարածքը /մ²/	8400	8400	8400	8400	8400
Ուսանողների թիվը	1548	1531	1693	1685	1580
Մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը /մ²/	**5.43**	**5.49**	**4.96**	**4.99**	**5.32**

2017-18 ուստարում մեկ ուսանողին բաժին ընկնող ուսումնական տարածքն ավելացել է ուսանողների քանակի նվազման պատճառով: Իսկ ընդհանուր առմամբ մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը հաստատուն է (5-5,5մ²):

Ուսանողների թվաքանակի մեջ ներառված են նաև հեռակա ուսուցման բաժնի ուսանողները, որոնց դասապրոցեսը կազմակերպվում է երկրորդ հերթափոխով:







Յուցանիշ 4.3. Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը

Յուցանիշ 4.3	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ակադեմիական խմբերի թիվը (միջինը՝ 36 ուսանող խմբում)	63	64	74	82	75
Լսարանային ֆոնդը (լսարանների քանակը)	53	53	53	56	56
Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը	**0.8**	**0.8**	**0.7**	**0.7**	**0.7**

Վերջին 4 տարիների ընթացքում ակադեմիական խմբերի թիվը աճել է, որը պայմանավորված է մասնաճյուղում նոր կրթական ծրագրերի իրականացմամբ, արդյունքում նրանց համար ստեղծվել են նոր լսարաններ:

Ուսանողների թվաքանակի մեջ ներառված են նաև Հեռակա ուսուցման բաժնի ուսանողները, որոնց դասապրոցեսը կազմակերպվում է երկրորդ հերթափոխով:



Ցուցանիշ 4.4. Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում

Ցուցանիշ 4.4	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Գրքերի թիվը	12042	14235	14559	14908	18062
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1548	1531	1693	1685	1580
Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում	**7.8**	**9.3**	**8.6**	**8.8**	**11.4**

Ուսանողներին հասանելի գրականության թիվը տարեցտարի ավելացել է, սակայն այս ցուցանիշն անհրաժեշտ է անընդհատ բարելավել: Զուգահեռ ստեղծվել է նաև էլեկտրոնային գրադարան՝ դասավանդվող բոլոր մոդուլների էլեկտրոնային դասախոսությունների և հիմնական դասագրքերի թվայնացված տարբերակներով:

2017 թվականի դեկտեմբերից գործարկվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանը ijevan.ysu.am հասցեով, որտեղ ազատ և մատչելի տարբերակով առաջարկվում է օգտվել մոտ 850 էլեկտրոնային գրքերից (հիմնականում դասագրքեր, մենագրություններ, ինչպես նաև գիտական ամսագրեր և այլն):





Յուցանիշ 4.5. Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը, նոր գրքերի և ամսագրերի տարեկան թիվը

Յուցանիշ 4.5	2013	2014	2015	2016	2017
Նոր գրքերի տարեկան թիվը	1059	1105	909	709	1349
Նոր ամսագրերի տարեկան թիվը	120	125	374	50	354
Գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (հզ. դր.)	**516**	**363**	**848**	**279**	**707**
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1548	1531	1693	1685	1580
Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (դր.)	**333.3**	**237.1**	**500.9**	**165.6**	**447.5**

Թեև նոր գրքերի և ամսագրերի թիվն անընդատ աճում է, սակայն գրականություն ձեռք բերելու համար տարեկան ծախսերը փոփոխական են՝ պայմանավորված գրականության նկատմամբ ունեցած պահանջով, հրատարակված նոր մասնագիտական գրականության անհրաժեշտությամբ, մասնագիտական գրքերի բարձր գներով, ինչպես նաև նոր մասնագիտությունների համար անհրաժեշտ գրականությամբ:

Ուսանողներն ու ամբիոնները հնարավորություն ունեն ներկայացնելու պահանջագրեր և անհրաժեշտ գրականության ցան-կեր, ըստ որոնց և իրականացվում է գրքերի ձեռքբերումը: Հատկապես մեծ պահանջարկ ունեն արտասահմանյան գրականության առանձին հեղինակների աշխատությունները որին նպաստում է նաև տվյալ գրքերի գովազդը տարբեր համացանցային կայքերում:







Յուցանիշ 4.6. Գրադարանի տարեկան աբոնենտների (ընթերցողների) հարաբերությունը ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների և դասախոսների թվին

Յուցանիշ 4.6	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Նոր աբոնենտների թիվը	265	220	265	254	242
Ընդհանուր աբոնենտների /ընթերցողների / թիվը	1272	1230	1272	1034	1014
ԵՊՀ ԻՄ դասախոսների և ուսանողների թիվը	1657	1642	1813	1811	1698
Տարեկան աբոնենտներ /դասախոսներ և ուսանողներ հարաբերությունը	0.77	0.75	0.70	0.57	0.60

2013-17թթ. ընթացքում գրադարանի տարեկան աբոնենտների հաշվեկշիռը դասախոսների և ուսանողների թվի մեջ համեմատաբար կայուն է՝ 70%-77%, որը պայմանավորված է ինչպես գրադարանային ֆոնդի հարստացմամբ և արդիականացմամբ, այպես էլ համացանցին միացված համակարգիչների տեղադրմամբ:

Գրադարանի նոր աբոնենտների միջին թիվը վերջին 5 տարիների համար 255 է: Նոր աբոնենտների թվի նվազումը պայմանավորված է շրջանավարտների և 1-ին կուրս ընդունված ուսանողների թվաքանակների տարբերությամբ, նաև դասախոսական կազմի կայունությամբ: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն ու հաճախ օգտվում են ԵՊՀ-ի՝ անհամեմատ հարուստ գրադարանային պաշարներից, տանը ունեն համակարգիչներ և ինտերնետային կապ, որը հնարավորություն է տալիս ինքնուրույն նույնպես օգտվել էլեկտրոնային գրադարանից, նաև օգտվել դասախոսների կողմից տրամադրվող էլեկտրոնային նյութերից:







Յուցանիշ 4.7. Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ԵՊՀ ԻՄ-ի ծախսերի հանրագումարում

Յուցանիշ 4.7	2013	2014	2015	2016	2017
Շահագործման ծախսերի ծավալը (հզ. դր.)	118820	126625	125500	130600	132125
Ընդհանուր ծախսերի ծավալը (հզ. դր.)	348782	372427	417723	435513	428818
Շահագործման ծախսերի տեսակարար կշիռը (%)	**34.07**	**34.00**	**30.04**	**29.99**	**30.81**

Շահագործման ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում համեմատաբար կայուն է և տատանվում է 30-34%-ի սահմաններում:





Յուցանիշ 4.8. Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը

Յուցանիշ 4.8	2013	2014	2015	2016	2017
Տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	6474	8609	4699	4750	5242
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1548	1531	1693	1685	1580
Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	4.18	5.62	2.78	2.82	3.32

2013-14 տարիներին աճել են տարեկան ձեռքբերված սարքավորումների ծախսերը, ինչը պայմանավորված է մասնաճյուղն անհրաժեշտ սարքավորումներով համալրելու հանգամանքով: Այսինքն, վերոնշյալ ծախսերը կտրուկ ավելացել են՝ պայմանավորված համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ: Նշված փոփոխություններն էլ հիմք են դարձել մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքի աճի համար (3,3-5,6 հզ. դր.): 2015-17թթ.-ների համար այդ ծախսերը նվազել են նոր սարքավորումներով մասնաճյուղի հագեցվածության և նորերը ձեռք բերելու սահմանափակ անհրաժեշտության պատճառով:





Յուցանիշ 4.9. Տարեկան էներգածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան էներգածախսը

Յուցանիշ 4.9	2013	2014	2015	2016	2017
Էներգիայի տարեկան ծախսը (հզ. դր.)	4505	5563	4945	4980	6217
Ուսանողների և աշխատակիցների միջին տարեկան թիվը	1751	1740	1726	1783	1813
Տեսակարար էներգածախսը (հզ. դր.)	**2.6**	**3.2**	**2.9**	**2.8**	**3.4**

Վերջին երեք տարիներին տարեկան էներգածախսը փոփոխական է՝ պայմանավորված ջեռուցման տարբեր միջոցների կիրառմամբ հյուրանոցային համալիրում, համակարգչային սրահների ավելացմամբ և վերազինմամբ:





Յուցանիշ 4.10. Տարեկան ջրածախսը, մեկ մարդուն ընկնող տարեկան ջրածախսը

Յուցանիշ 4.10	2013	2014	2015	2016	2017
Ջրամատակարարման և ջրահեռացման տարեկան ծախսը (հզ. դր.)	849	963	1164	1192	1220
Ուսանողների և դասախոսների միջին տարեկան թիվը	1751	1740	1726	1783	1813
Ջրի տեսակարար ծախսը (հզ. դր./մարդ)	**0.48**	**0.55**	**0.67**	**0.67**	**0.67**

Վերջին 3 տարիների կտրվածքով տարեկան ջրածախսը կայուն է և նախորդ տարիների նկատմամբ ավելացել է, ինչը պայմանավորված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, մասնաճյուղի և հրավիրված դասախոսների համար նախատեսված հյուրանոցի կենցաղային պայմանների բարելավմամբ:





ԲՆԱԳԱՎԱՌ 5.

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յուցանիշ 5.1.	Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.2.	Հիմնական դասախոս-ասպիրանտ քանակական հարաբերակցությունը
Յուցանիշ 5.3.	Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցությունը
Յուցանիշ 5.4.	Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.5.	Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը, հաշվեկշիռը, համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը
Յուցանիշ 5.6.	Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը
Յուցանիշ 5.7.	Մասնաճյուղի էլեկտրոնային կայք էջը

Ցուցանիշ 5.1. Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը, հաշվեկշիռը

Ցուցանիշ 5.1	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը	10	3	2	1	0
Հիմնական դասախոսական կազմը	97	94	97	97	65
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների հաշվեկշիռը (%)	10.3	3.2	2.1	1.0	0.0

Հետազոտական նախագծերում ընդգրկված հիմնական դասախոսների մասնաբաժինը փոքր է: Վերջին 3 տարիներին այդ թիվը փոքր է, ինչը պայմանավորված է դասախոսական կազմի քանակի հաշվարկման փոփոխմամբ, այսինքն այդ ցուցանիշում ներկայացված է միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմից հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը: Նախկինում այդ թվի մեջ ներառված են եղել մասնաճյուղում աշխատող բոլոր դասախոսների տվյալները: Այստեղ մասնաճյուղը բավականին անելիք ունի:



Ցուցանիշ 5.2. Հիմնական դասախոս-ասպիրանտ(հայցորդ) քանակական հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.2	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական դասախոսական կազմ	97	94	97	97	95
Ասպիրանտներ /հայցորդներ/	18	14	15	7	11
Հիմնական դասախոս/ասպիրանտ քանակական հարաբերակցությունը	**5.4**	**6.7**	**6.5**	**13.9**	**8.6**

Վերջին տարիներին հիմնական դասախոս և ասպիրանտ (հայցորդ) հարաբերակցության ցուցանիշը աճել է: Այն հիմնականում պայմանավորված է ասպիրանտների (հայցորդների) թվի նվազմամբ: Որպեսզի է, որ 2017-18 ուստարում գրանցվել է ակտիվություն և ասպիրանտների (հայցորդների) թիվը էապես ավելացել է:





Ցուցանիշ 5.3. Գիտական հրատարակություններ-դասախոսներ հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.3	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական դասախոսական կազմը	97	94	97	97	65
Գիտական հրատարակությունների թիվը	96	107	120	69	50
Այդ թվում՝ մենագրություններ					3
գիտական հոդվածներ					36
զեկուցումների թեզիսներ					11
Գիտական հրատարակություններ/ դասախոսներ հարաբերակցությունը	**0.99**	**1.14**	**1.24**	**0.71**	**0.77**

2013-14 ուստարիներին գիտական հրատարակություններ- դասախոսներ հարաբերակցության ցուցանիշը համեմատաբար կայուն է եղել՝ 1-1,24: Վերջին 2 տարիներին այդ ցուցանիշը նվազել է գիտական հրատարակությունների քանակի հաշվման փոփոխման պատճառով (ներառված են միայն մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի գիտական հրատարակությունները): Սակայն կարևոր է, մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմը կայուն զբաղված է գիտական գործունեությամբ:





Յուցանիշ 5.4. Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը

Յուցանիշ 5.4	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ընդհանուր հրատարակությունների թիվը	104	122	136	69	51
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը	21	22	1	1	3
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների հաշվեկշիռը (%)	20.2	18.0	0.7	1.4	5.9

Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների մասնաբաժինը 2015-16 ուստարվանից սկսած կտրուկ նվազել է այդ ցուցանիշի վրա դրված պահանջների փոփոխման արդյունքում: Այստեղ ներառված են միայն մասնաճյուղի հիմնական դասախոսների հրատարակությունները: Չնայած 2017-18 ուստարում այդ հրատարակությունների քանակն ավելացել է:





Ցուցանիշ 5.5. Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը և հաշվեկշիռը, համակարգիչների թիվ-մասնակից հարաբերակցությունը

Ցուցանիշ 5.5	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թիվը	9	10	2	0	0
Համակարգիչների ընդհանուր թիվը	140	144	150	168	188
Հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների հաշվեկշիռը (%)	**6.4**	**6.9**	**1.3**	**0.0**	**0.0**
Հետազոտական նախագծերում ընդգրկված մասնակիցների թիվը	10	12	2	1	0
Համակարգիչների թիվ/մասնակից հարաբերակցությունը	**0.90**	**0.83**	**1.00**	**0.00**	**0.00**

2013-16թթ. ընթացքում հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների հաշվեկշիռը նվազել է, իսկ 2016-17 ուստարվանից այն 0% է, որը պայմանավորված է ինչպես հետազոտական աշխատանքներում օգտագործվող համակարգիչների թվի նվազմամբ, այնպես էլ համակարգիչների ընդհանուր թվի ավելացմամբ, և անուղղակի ձևով կապված է նաև մասնաճյուղում հետազոտական ծրագրերի բացակայությամբ:





Յուցանիշ 5.6. Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը, հաշվեկշիռը

Յուցանիշ 5.6	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապի կետերի թիվը	9	5	0	0	0
Ինտերնետային կապի կետերի ընդհանուր թիվը	110	141	150	163	188
Հաշվեկշիռը (%)	8.2	3.5	0.0	0.0	0.0

Գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետ կապի կետերի հաշվեկշիռը 2015/16 ուստարուց սկսած 0-է, այն պայմանավորված է գիտության համակարգի համար նախատեսված ինտերնետային կապերի բացակայությամբ՝ մասնաճյուղում հատուկ դրամաշնորհային և գիտական ծրագրեր չեն իրականացվում:





Յուցանիշ 5.7. Մասնաճյուղի էլեկտրոնային կայք էջը

Յուցանիշ 5.7	2017/18
Մասնաճյուղի կայքի տարեկան այցելությունների թիվը	99 107
Էլեկտրոնային գրադարանի տարեկան այցելությունների թիվը	68 261
Առկա էլեկտրոնային ուսումնական նյութերի թիվը	2687

Այս թվերը վկայում են, որ մասնաճյուղի կայքը պահանջված է, նրա մշտական այցելուներն են մասնաճյուղի վարչական աշխատակազմը, դասախոսական կազմը և ուսանողները, քանի որ կայքը հանդիսանում է ԵՊՀ ԻՄ-ի գործունեության լուսաբանման, թափանցիկության ապահովման ամենամատչելի և կարևոր միջոցներից մեկը:

ԲՆԱԳԱՎԱՌ 6. ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Յուցանիշ 6.1.	Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում
Յուցանիշ 6.2.	Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը
Յուցանիշ 6.3.	Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը
Յուցանիշ 6.4.	Բուհ-գործատու համագործակցությունը

Յուցանիշ 6.1. Դասախոսների ներգրավվածությունը միջազգային նախագծերում

Յուցանիշ 6.1	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների թիվը	4	3	0	0	0
Հիմնական **դասախոսական** կազմը	97	94	97	97	95
Միջազգային նախագծերում ներգրավված դասախոսների հաշվեկշիռը (%)	4.1	3.2	0.0	0.0	0.0

Վերջին 3 ուստարիներին միջազգային նախագծերում ներգրավված ԵՊՀ ԻՄ դասախոսներ չկան:





Յուցանիշ 6.2. Համալսարանական պարբերականների թիվը, պարբերականությունը

Յուցանիշ 6.2	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Համալսարանական պարբերականներ	3	3	3	3	5

Համալսարանում պարբերաբար հրատարակվում են «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, «ԵՊՀ ԻՄ-ի գործունեության գնահատման առանցքային ցուցնիշներ»-ը և «ԵՊՀ ԻՄ-ի գործունեության տարեկան հաշվետվություն»-ը:



Յուցանիշ 6.3. Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը

Յուցանիշ 6.3	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հանրությանը տրամադրվող տեղեկա-տվական հրատարակությունների թիվը	3	7	7	7	7
Կրեդիտային համակարգով ուսումնա-ռության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք	5	5	5	5	5
Բակալավրի կրթական ծրագրեր		14	14	17	18

Հանրությանը տրամադրվող տեղեկատվական հրատարակությունների թիվը 2014/15 ուստարուց ավելացել է՝ պայմանավորված հայերեն և օտարալեզու գովազդային բուկլետների հրատարակմամբ: ԵՊՀ ԻՄ-ում կազմվում և պաշտոնական կայքում տեղադրվում են առկա (4 ֆակուլտետներ) և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքեր»-ը, որոնք հասանելի են բոլոր ուսանողներին և կրթական ծրագրերը:





Յուցանիշ 6.4. Բուհ-գործատու համագործակցությունը

Յուցանիշ 6.4	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ուսումնական պրակտիկաների կազմակերպման նպատակով կնքված պայմանագրեր	0	4	5	5	6
Մասնագիտական/արտադրական պրակտիկաների կազմակերպման նպատակով կնքված պայմանագրեր	22	25	25	24	25
Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի և միջոցառումների թիվը					?
Ընդամենը	22	29	30	29	31

Ուսումնական և մասնագիտական պրակտիկաների իրականացման շրջանակներում մասնաճյուղը պարբերաբար ընդլայնում է գործատուների հետ համագործակցության շրջանակը՝ այն վարվերացնելով համապատասխան պայմանագրերով: Իսկ բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում իրականացվում են բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ. դիմորդների մասնագիտական կողմնորոշման շրջանակներում կատարվում են այցելություններ դպրոցներ, աշակերտների այց մասնաճյուղ, ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվում են դպրոցական օլիմպիադաներ և այլն: